

նու: 1616ին Գր. Վ. Դարանաղցի իր կամօք
հրաժարեցաւ, եւ քահանայից եւ ժողովորդեան
հաւանութեամբ մեկնեցաւ գնաց Երուսաղէմ եւ
իւր երկու տարի հոն մնաց: Այսպէսով Պոլսոյ
գլխաւոր Պատրիարքն էր Յովհ. Վ. Խուլ 1613էն
սկսեալ, այնպէս որ Գր. Վ. Դարանաղցի իր
պատրիարքութիւնը «սուտանուն» կ'անուանէ:
(Ժամանակագրութիւն Գր. Վ. Դարանաղցւոյ)

Թէ Յովհ. Վ. Խուլ այս երրորդ անգամ
Պատրիարք ըլլալուն՝ որչափ ատեն մնաց, ծա-
նօթ չէ. կարելի է որ մինչեւ 1616 տակաւին
Պատրիարք էր. վասն զի Դարանաղցին նոյն տա-
րին իր հրաժարիլը կը յիշէ, իսկ Յովհաննու եւ
Զաքարիայի մասին յիշատակութիւն չ'ընեն:
Կարելի է թէ Գր. Վ. Կեսարացի 1615ին զինք
դարձեալ տապալած է եւ թերեւս Դարանաղ-
ցին այս պատճառաւ 1616ին հրաժարած եւ
Երուսաղէմ մեկնած, վասն զի Կեսարացին իբրեւ
Պատրիարք կը գրէ նոյն տարին Յանդիմանագիր
մ'առ Մելքիսեդ կաթողիկոս, որուն վրայ Զա-
քարիա Պատրիարքի կենսագրութեան մէջ կը
խօսիմ, եւ սովորական գաւազանագիրքեր զինքը
մինչեւ 1621 Պատրիարք կը դնեն, եւ կը նշա-
նակեն թէ Յովհ. Վ. Խուլ 1621—23 դար-
ձեալ պատրիարքած եւ 1623ին դարձեալ Կե-
սարացւոյն տեղի տալ ստիպուած է, որ մինչեւ
1626 պատրիարքելէն ետեւ դարձեալ 1626ին
Զաքարիայի տեղի տուած է, որ եւ իր կարգին
1633ին Կեսարացւոյն յանձնել ստիպուած է,
եւ վերջինս մինչեւ ցմահ 1636 Պատրիարք